ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանրիկյան.

Ի պատասխան Ձեր 14.12.2018թ. 01/22Մ գրության՝ տեղեկացվում է.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենքի 140-րդ և 224-րդ հոդվածների համաձայն՝ կանգնակների կամ այլ պարագաների միջոցով երթևեկելի մասը սահմանափակելու իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու, ինչպես նաև իրավախախտումների նկատմամբ վարչական պատժամիջոցներ կիրառելու լիազորությունը վերապահված է ՀՀ ոստիկանությանը: Չնայած այդ հանգամանքին, Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ, ոստիկանության մարմինների հետ համագործակցության շրջանակում, Երևանի քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներն աջակցում են խոչընդոտների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների իրականացմանը: Այս համատեքստում, աշխատակազմի տրանսպորտի վարչության աշխատակիցների շրջայցի ընթացքում զգուշացվել են «Հայաթ» և «Էրեբունի» հյուրանոցների տնօրինությունները՝ կանգնակները հեռացնելու համար: Միաժամանակ տեղեկացվել է, որ հակառակ պարագայում հարցը կփոխանցվի ՀՀ ոստիկանություն՝ սահմանված միջոցներ կիրառելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ